ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՈՒՐԱՐՏՈՒ ԱԱԿ ԲԲԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/27 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
6	ՈՒՐԱՐՏՈՒ Ա.Ա.Կ. ԲԲԸ	hh	ՈՒՐԱՐՏՈՒ Ա.Ա.Կ. ԲԲԸ	Մեդալը բաղկացած է չժանգոտվող ցինկապատ պողպատե կախիչից և դրան կապօղակով ամրացած հավասարակողմ բազմանկյուն, որի վերին մասը շրջանաձև է: Կախիչը ասեղային ամրակով. Արտադրվում է առնվազը 75% պղնձի պարունակությամբ համաձուլվածքից, փայլատ մակերես ստանալու տեխնոլոգիայով (էլեկտրոէռոզիոն մշակման մեթոդով ստացվող փայլուն մատային մակերես Ն2 սանդղակով), դրոշման եղանակով, անցնում է հատուկ գալվանական մշակում և ոսկեպատվում 900-ից բարձր հարգի ոսկով՝ նվազագույնը 0,5 մկմ հաստությամբ: Տրամագիծը՝ 45մմ, հաստությունը՝ 2մմ (շեղում՝ +/- 0.2մմ): Մեդալի հավասարակողմ բազմանկյան ֆոնի վրա, որի վերին մասը շրջանաձև է, Երկրի մայրցամաքների թիվը խորհրդանշող մուգ կարմիր

				գույնի հնգաթև աստղ է: Կողմերը ռոմբավորված են արևը խորհրդանշող 1մմ լայնությամբ սրածև ճառագայթներից կազմված ռոմբիկներով, որոնք հատվում են կարմիր աստղի կենտրոնում գտնվող 25 մմ տրամագիծ ունեցող երկրագունդը խորհրդանշող կապույտ շրջանակում: Շրջանակի վերին մասում Արարատ լեռն է, որի վերևում պատկերված է ալիքներ, ցնցումներ աղետներ խորհրդանշող կորը, իսկ ներքևում՝ վեր պարզված ձեռքեր, որոնք պահպանում են մոմի լույսը: Գնդի ներքևի մասում առանցքի ուղղությամբ աղետների դիմագրավող սև գույնի վահանն է, որի վրա պատկերված է աղետից փրկված Արարատի ոսկեգույն ուրվագիծը: Վահանից դուրս են գալիս աղետապաշտպան տեգերը (կացինները), շեղբով ձուլվում հնգաթև աստղի գագաթը հավասարաչափ երիզող ոսկեգույն բազմանկյան ֆոնին: Հնգաթև աստղի վերին 3 թևերը արտագծած շրջանագծում կապույտ ֆոնի վրա ձախ մասում գրված է <<ՀՀ ԱԻՆ>>, իսկ աջ մասում՝ <<ՊԱՏՎԱՎՈՐ ԱՇԽԱՏԱԿԻՑ>> բառերը: Մեդալի դարձերեսին հորիզոնական մեկ տողով գրված են «ՀՀ ԱԻՆ MES RA» բառերը և լազերային եղանակով դաջվում է մեդալի համարը (սկսած 0132-ից): Կատարվող գրառումների անվանանիշը 3.2 մմ ուղղահայաց ուղղությամբ, տառատեսակը ՝ Arial Armenia: Մեդալն ունի վեցանիստ սեղանաձև կախիչ՝ 30X45 չափսերով, վրայից ուղղանկյունաձև ոսկեգույն շերտաձողիկ՝ «ՀԱՅԱՍՏԱՆ» մակագրությամբ: Կախիչի դարձերեսին ամրացված է մեդալը հագուստին ամրացնելու հարմարանք: Կախիչի ժապավենի

				գույները՝ կապույտ (CMYK 100;80;3;15), կարմիր (CMYK 10;100;100;49): - Մեդալների արտաքին տեսքը պետք է համապատասխանի համաձայնեցված նմուշի արտաքին տեսքին՝ ունենալով նույն համաձուլվածքը, ռելիեֆիային պատկերները, գրվածքները, ժապավենը և գունավորումները: Թվային տեխնոլոգիաների կրիառմամբ դրոշման եղանակը ապահովում է մեդալների միանմանությունը և չափսերի բարձր ճշտությունը: Ցանկացած երկու կրծքանշանի չափսերի շեղումը ոչ ավել քան 0.1 մմ: Մեդալի դարձերեսին դրոշմման եղանակով դաջվում է արտադրողի ապրանքային նշանը: Չի թույլատրվում ՝ - Պատկերների և գրվածքների աղավաղում: - Մակերեսի վրա խազեր, քերծվածքներ, այլ հետքեր: Մատակարարը մեդալների նմուշների եռաչափ (3D) մոդելավորված նկարները և հետո նմուշները պետք է նախապես համաձայնեցնի պատվիրատուի հետ: Մեդալի հետ տրվում է վկայական (էսքիզ 6):

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

УРАРТУ ТПК АООТ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/27 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
6				